


ՏՆՕՐԷՆ-ԽՍՒԲԱԳԻՐ
Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՆԱՍԱԿ ԿՈՒՐ ՈՐ ԵՆ Է ԳՐՈՒԹԻՒՆՆ
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ
ԽՈՒՐԱԳԻՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԲՐԱԳՐԻ
ԳԱՇԻՐԷ (ՀԱՊԱՊԱՆԻԷ)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABONNIEN LE CAIRE (ÉGYPTÉ)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒՆ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵ	
Տարեկան Ձրակն	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ ԿԱՆՆԻԿ Է
ԵՆ ԹՂՈՍԱՍԻ ԵՄԻՔԸ
ԽՈՒՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ :

ԽՈՒՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՂՂՈՒՄ
ԳՐՈՒԹԻՒՆԷՆ ԵՆ ՏՐՈՒՐ :

ԱՂԱՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Հաճոյակատար չե՞ս, ուխտա՞ծ ես ազատ ձայնդ չ'իտեղծել կոկորդիզ մէջ, վատութեան դէմ կը գոռա՞ս, վա՞ր կ'առնես գիմակները, ուրեմն խռովարար ես դուն, վրասակար տա՞րր ես դուն. «Վրասակար գաղափարներ ու գգացումներ ներշնչող» ես դուն, բանտի, կախաղանի արժանի միակ անձն ես դուն, ոտակոն կը բերեն քեզ համար, կառավարութեան մասնաւոր հրահրութիւնը կը հրաւիրեն քու վրաք. դատի կոչելու սպառնալիքները կը տարածայնեն շուրջ ու հասարակաց կարծիքը կը թունաւորեն իրենց կարգ մը սինլքոր, հացկատակ, իրք, լրեսն արբանեակներով, զոր մենք խիստ լաւ ու մտաէն կը ճանչնանք և կ'սպասենք որ օր մը Պօլիս երթան Բ. Իրան ներկայանալու, քանի որ հոն այս տեսակ ծառայութիւններու համար, այսօր, լիառատ թոշակի վարին է բացուած:

Ահա մեր ջո՛ղ աղաներու և իրենց valet ներու այսօրուայ մեր դէմ բռնած ընթացքը, որուն դէմ մենք ուրիշ բան չենք ընենք, բայց եթէ անխնայ ձեռքով կ'ապտակենք, ու մամուլի միջոցաւ անոնց ճակտին վրայ կայէնի յաւիտեանական խարանը կը գրօջմենք:

Խու՛ղ հակառակութիւն մը սկսած է մեծ արքաներու կողմէ Արշաղոյսի դէմ, ժողովրդեան արգար բողոքներուն պաշտպան կանգնելուն համար. Երեւի թէ աղգափնաս Պատրիարքի մը դէմ ուղղուած խիստ քրննադատութիւնները, անոր պաշտպաններուն շատ ալ հաճելի չեն եկեր, մտածելով որ գուցէ օր մ'ալ կարգը իրենց պիտի գար:

Առաջնորդարանի պաշտօնական յայտարարութեան տակ երկցող մի քանի փոքրիկ խմբագրական ծանօթութիւններն անգամ չի մարտող աղաները՝ իրենց գոյնը չուտով դուրս տուին: Ի՞նչ բան ըլլայ, ստորադաս պաշտօնեայ մը քննադատէ իր գերադաս խափական և բողոքէ աղգային իշխանութեան բռնած ընթացքին դէմ, իր ետեւէն աղատամիտ հասարակութիւն մը տանի, անխնայ նշարակը ձեռք առած մատը դնէ աւելով վարակուած վատտուող ու քանկոնեալ ըլլալու մտաիկ աղգային վերջին վրայ, օ՞, ասիէ աւելի մահացող մե՞ղք: Պէտք է պաշտօնանկ ընել, պէտք է նիւ-

թական ապահով յառաջ բերել, որով գուցէ ազատ ձայնը խեղդուի:

Իրաքննիչ գերծ Եգիպտոսի մէջ ազաներու կատաղութեան չափը ասիէ աւելի կարելի չէ երեւակայել. Նիհար բարոյականով հարուստ մեր աղաները կ'անգիտանան սակայն թէ Արշաղոյսը զօրաւոր հիմքերու վրայ հաստատուած է, այն է ժողովրդի իրաւանց և արդարութեան վրայ:

Հակառակորդներու արտի կատաղութեան փրփուրը մինչև բերանին ցայտած, գուցէ օր մը վզըձեն ա'լ իրենց անտանելի դարձած Արշաղոյսի խմբակին դէմ ալ կըրկնել կառավարութեան երկարելով զեկուցադիր մը, որ այժմէն մենք կը թեղադրենք իրենց փափաքած հետեւեալ իմաստով:

«Ներքին ո՛ր և է գործի համար մի քանի անձեր (Արշաղոյսի խմբագրութիւնը) խռովութեան հեղինակներ ըլլալով կ'ուզեն քաղաքիս մէջ գանուող հայ ժողովրդի խաղաղութիւնը վրդովել, հետեւաբար կը խնդրենք ձեռնհաս իշխանութենէդ, որպէս զի պէտք եղած միջոցները ձեռք առնէ և վերոյիշեալները իբր պատասխանատու ձերբակալէ»:

Հարկաւ այս կարգի զեկուցադրերը, ինչպէս սովորութիւն է, պաշտօնական կնիք պէտք է կրէ և Դիւանէն վաւերացուի:

Խմբագրութիւնը սակայն, այդ տեսակ զեկուցադրի մը համար զարմացող ու շուարող չէ:

Արշաղոյսի Տնօրէն-Խմբագրի հրատարակուած անթիւ առթիւ առաջնորդարանի վարկաբեկ երկու պաշտօնագրերը հրատարակուելէն ի վեր, թերթին համակրողներու, բարեկամներու և նոյն իսկ ըսեմ թշնամիներու կողմէ եղած բերանացի ու գրաւոր ձեռք առնող շնորհաւորագրերը արդէն վաղահաս փառքը կը կազմեն Տնօրէն-Խմբագրին, որուն ժամանակէ մը ի վեր իր պաշտօնին մէջ յարատեւն անգամ խիստ մտաէն զիտենք թէ կատարեալ խղճի խայթ մը դարձած էր: Վերջապէս աղատեցաւ:

Մեր աղաները կրնային հարկաւ այդչափ բան մը կուսած ըլլալ ա'յն օրէն, որ ազատ Արշաղոյսը իր գոռները կը բանար ժողովուրդի սե ու կարմիր օրերուն վրայէն բարձրանալու:

Մենք չենք զարմանար տեղական աղգային իշխանութեան բրածներուն վրայ,

քանի որ իրենց ստացած վերջնական գրծուած իրաւասութեան սահմանէն անդին կ'անցնին բռնապետական ոճով մը:

Տեղական աղգային իշխանութիւնը յարգչ'գտնելով իր գործած անթաւելի զեղծումներուն դէմ ընդդիմադիր ոյժ, բնական էր թէ «կտրածը կտրած, կապածը կապած» համբաւաւոր գրութիւնը կը վայելէր ու կը մարտէր միանգամայն: Չունէինք հասարակաց կարծիքը սուսնորդելու, զայն որոշ ուղղութեան մը բերելու և անով ի հարկին աղնիւ և հակամարտ հոսանքներ գոյացնող տեղային մամուլը, որ ունենար իր որոշ գոյնը և զեղծումներու դէմ բարձրացնէր իր զօրաւոր ձայնը:

Ուրախայի է որ Մամուլի ձայնակից այսօր երիտասարդութիւն մ'ալ ունեցանք, որը գիտէ երեկուան իր հօր տուած մէկ ձախող վերջն ջախջախել վաղը:

Ուրեմն աշխատութիւնը և յարատեւութիւնն է որ կ'ստանայ մրցանակը:

Ա. Ն.

ՏԻԱՐ Մ. ՏԱՄԱՏԵԱՆԻ ՀԱՌԸ

(Շար. նախորդ քիւն)

Ալեթեան Սրբազանի վարած պաշտօններուն և կատարած գործերուն ամենէն կարեւորը և արդիւնաշատը եղած է իր Մշոյ առաջնորդութիւնը: Մինչև իր մահուան օրը իր կեանքին ամենէն սիրելի յիշատակները կապուած էին Տարօնի հետ թէպէտ 12 տարինքէ ի վեր Մուշէն հեռացած՝ մինչև վերջը զեռ կ'ազգէր որ «Մշոյ Առաջնորդ» անունով ճանչնային զինքը: Մշեցիներն ալ, թէպէտ այդքան տարիներ իրմէ զուրկ՝ նոյնպէս չէին գաղթած զինք իրենց առաջնորդը նկատելէ: Ալեթեանէն վերջը Մուշ տեսած է Սրբանձտեանցներ, Մուրատեաններ, Վարդան վարդապետներ և նոյն իսկ Խարախանեան ներսէս վարդապետի պէս աղգասէր և ժողովրդական ապաշնորդներ. բայց դարձեալ Մշեցին իրեն բուն առաջնորդը կը հեռուէր Ալեթեան Սրբազանը, ցորչափ կենդանի էր:

Այսչափ մեծ սեղ գրաւած էր նա Մշեցիներու մտքին, սրտին ու հոգիին մէջ: Ու պիտի տեսնենք թէ Ալեթեան Սրբազան զիւրազին վատարկած չէր Տարօնոյ Հայոց մէջ այդ մեծ ժողովրդականութիւնը:

Ալեթեան Սրբազան երկու անգամ առաջնորդ եղած է Մշոյ: 1. 1876ին, այսինքն վերջին ուսումնարանը պատերազմին ժամանակները և անկէ վերջ՝ մինչև 1880 երբ երբ կասկածելի Պօլիս կանչուեցաւ: 2. 1885—86ին, որմէ յետոյ Վան զրկուեցաւ իր պատրիարքական փոխանորդ:

Ստալին չըջանի պաշտօնավարութեանը դրծուարութիւնները դիւրաւ կը մակաբերուին, քանի

որ պատերազմի անունը սուրինքը Արգարեւ, կըր-
նաք երեւակայել պատերազմի արհաւիրքները, ու
վերջին կտորածներու արեւալի օրինակներէն
գիտենք թէ ինչի՞ր չկրնար ընել թուրքական մո-
լեռանքով թիւնը՝ երբ իր գագաթնակէտն հասած
ըլլայ Արգ՝ Ալէաթճեան Սրբազան այգիսի փա-
փուկ ժամանակ մը զօրաւոր ձեռքով կառավարած
է իր առաջնորդական թիւնը. դիտցած է պատկա-
ռանք ազգել թուրքերուն: Մշոյ գաշտի պատու-
հասն եղող աւազակներ զողացած են իր անունէն
եւ իր ոտքերուն առջև. խոնարհած են՝ Հայերը չը
կեղեքելու խոստումով: Ինք Ալէաթճեան Սրբա-
զանը անձամբ պտըտած է զեղէ գեղ եւ ժողո-
վուրը յորդորած է ինքնապաշտպանութեան. աշ-
խատած է համարաշխուժութիւն առաջ բերել բողո-
քական եւ կաթոլիկ հայերու հետ ալ եւ անոնց
գատերն ալ պաշտպանած է կառավարութեան
առջև: Այդ ժամանակի կառավարիչ Սայիտ փա-
շային հետ լաւ յարաբերութիւններ մշակելով զա-
նիկա իր արեւուն մէջ առած է: Այսպէս իր շը-
նորհիւ Մոջ մնացած է խաղաղ եւ անվնաս ա՛յն-
պիսի վտանգաւոր ժամանակ մը՝ երբ ուրիշ գա-
ւառներ, օրինակ Վանայ նահանգը եւ Ալաշկերտը
աւարառութեան եւ կոտորածի սարսափներու են-
թարկուեցան: Մշեցիները այս բանի համար զէպ
ի Ալէաթճեան Սրբազանը անմոռաց երախտագի-
տութիւն կը պահեն իրենց սրտին մէջ:

Երախտագիտութիւն ըսի, բայց զժողովարար
պաթիւստութեան օրինակ մը պիտի տամ հիմա:
Պատերազմէն վերջը Սայիտ փաշա պաշտո-
նանկ եղած էր. կամաց կամաց թուրքերը սկսած
էին գլուխ վերցնել եւ հայերու հետ թշնամաբար
վարուել: Օր մ'ալ Մշոյ Բրտի թաղի եկեղեցիին
վրայ կ'արշաւեն պատարագի ժամանակ, եւ շուն
մը բերելով՝ սկիհի տեղ քանանային գերկը կու-
տան եւ կը պտըտցնեն խորանին շուրջը. — ասով
վերաբերովի վեհ արարողութիւնը կը ծագէին ու
եկեղեցին կը պղծուէր:

Այս զէպէն հայերը կը գրգռուին. ժողովուր-
դը գունդագունդ կը դիմէ առաջնորդարան եւ կը
պատմէ եղելութիւնը: Ալէաթճեան Սրբազան
ինքն ալ զէպէն թարմ տպաւորութեան տակ
յուզուած՝ առանց կանխաւ ականատես վկաներու
ստորագրութիւնները անելու իբր երաշխաւորու-
թիւն ապագային համար, անմիջապէս բողոքի
բուն հեռագիրներ կը տեղացնէ Դուռ ու Պատ-
րիարքարան: Ընդհանրապէս մեծ կարեւորութիւն կ'ըս-
տանայ. ու Դոնէն հրաման կուգայ որ քննութիւն
մը բացուի եւ յանցաւորները պատժուին: Վկաներ
կը պահանջուին. բայց զէպէն ականատեսներէն
ո՛չ մէկը կը գտնուի, որ յանդմէս անձամբ զալ
վկայութիւն տալ—անշուշտ վախնալով ապագայ
վրէժխնդրութեան զոհ երթալէ:

Այսպէսով Ալէաթճեան Սրբազան մին մինակ
մէջ տեղ կը մնայ իբր դատաւազ, եւ եղելութիւ-
նը «պաշտօնապէս չի հաստատուիր»: յանցաւոր-
ները ազատ կը մնան եւ ընդհակառակը Ալէաթճ-
եան Սրբազան կասկածելի կը դառնայ յայն կա-
ռավարութեան: Աւելիաւորապէս այս զէպէն
հետեւանք մը է որ վերջ ի վերջոյ Կ. Պոլիս կը
բերուի իբր խոտվարար 1880ին:

Ի պատիւ Մշեցիներու պէտք է ըսեմ սակայն
թէ՛ երկար դարերու ճնշման տակ ստրկացած ժո-
ղովրդի մը մէջ դիտակցութիւնը եւ ինքնապաշտ-
պանութեան ոգին յանկարծ մէկ օրուան մէջ չեն
պարուար, այլ երկար ջանքերու եւ աշխատու-
թեանց կը կարօտային: Աւելի տեսնենք որ Մշե-
ցիները այս դատապարտելի ընթացքին արատը
սրբեցին իրենց ճակատէն՝ Ալէաթճեան Սրբազա-
նի արժանաւոր՝ գիտակցութեան տէր ժողովուրդ
մը հանդիսանալով:

Ուրիշ մը կրնար չներել Մշեցիներուն այս
ստրկական վարմունքը եւ մէկ մ'ալ ոտք չկոխել
անոնց երկիրը. Ալէաթճեան Սրբազան իր վեհանձ-
նութիւնը ցոյց տուաւ ներելով այդ արեւախոտու-
թեան, եւ իր անձը, սիրտը եւ հոգին դնելով ա՛յն
տեղին վրայ՝ որը ճիշդ այդ պատճառաւ աւելի կը
կայտային իր հոգածութեանը. զի ոտվիւ քաջ զնե
զանձն իւր ի վերայ ոչխարաց:

Ալէաթճեան Սրբազանը Մոջ վերապարճնելու
համար ներսէն Պատրիարքի ջանքերը աչարդիւն
մնացին. բայց անոր յաջորդող Յարութիւն Պատ-
րիարքը վերջապէս յաջողեցաւ: Սուլթանի արտո-

նութիւնը ստանալ, եւ Ալէաթճեան Սրբազան
երկրորդ անգամ Մոջ եկաւ 1885ին:

Ալէաթճեան այս անգամ Տարօնոյ կացու-
թիւնը բոլորովին վատթարացած գտաւ. իր զօրա-
ւոր ձեռքին բացակայութիւնը տեղական վտան-
գաւոր տարրերուն քաջալեր մը եղած էր ամէն
բան կամայականութեան եւ անխելարութեան
մասնելու: Այդ ժամանակ Մշոյ մէջ կազմուած էր
բառին կատարեալ նշանակութեամբը աւազակա-
յին ընկերութիւն մը՝ որուն ձեռքն էր երկրին,
քաղաքական, ազգային եւ կրօնական բոլոր վար-
չութիւնը: Բաղէշու վալի Արիֆ փաշան, Մշոյ
միւրթաւոր Սալիֆ փաշան, Բաղէշու մեքրուպ-
նին, Մշոյ թալիպ էֆէնտին, Ս. Կարապետի վա-
նահայր տիրաճաշակ Արիստակէս եպիսկոպոս Դեր-
ճակեան, Մշոյ իսարի ժողովի անգամ Թագոս է-
ֆէնտին եւ Վարդան աղան — ասո՛նք էին աւա-
զակային ընկերութեան անգամները:

Ամէն պաշտօն անտարրով կը ծախուէր. ամէն
գառ կաշառքով կը տեսնուէր. աւազակներ սան-
ձարձակ կը պտըտէին, որովհետեւ իրենց աւարէն
ու կողոպուտէն բաժին կը հանէին պաշտօնական
աւազակային ընկերութեան: Մուսա պէյ Չուխու-
րը կ'աւարտելէր, Մէհմէտ Ալի՝ Զիրաթէթը եւ Վար-
գոն. Իպօն ալ հիւսիսը ընտրած էր իր շահատա-
կութեանց վայր՝ մինչեւ Պինկէօլ եւ Մուսա. Օզօ
(Օսման) աւազակին ալ բաժին ինկած էր Ս. Կա-
րապետին մինչեւ Օղնուտ: Պագրանցի եւ Պատը-
զանցի քերտերը Սասունի գեղերը կը հարստա-
հարէին: Դաշտին մէջ թռչուն չէր թռչէր. երկիրը
կատարեալ զո՞րք մ'էր: Գիշերները Մշոյ դաշտը
կը լուսավառուէր Հայոց կրակի տրուած ցորենի
դէպերուն — մէկ վայրկեանի մէջ փռախաղող իրենց
տարեկան վաստակին — արեւներնայ ըրողովը: Ու-
լեղուով չպատմուելիք եւ սիրտ չընդմանալիք այս
ամեն ոճրագործութիւններուն մեղաւորացի էին Ա-
րիստակէս եպիսկոպոսի եւ Վարդան աղայի ու
Թագոս էֆէնտիի նման հայեր . . . :

Կրնաք երեւակայել թէ ի՛նչ մեծ եւ անփո-
խարինելի բարեք մը ըրած պիտի ըլլար Մշոյ երկ-
րին այն անձը, որ յաջողէր քայքայել այս աւա-
զակային ընկերութիւնը:

Այդ անձը Ալէաթճեան Սրբազանը եղաւ:

Ալէաթճեան երբ տեսաւ իր օրինաւոր բողոք-
ներուն ապարդիւն մնալը, իր քաջարի եւ կոռովի
նկարագրովը ջանաց եւ կըրցաւ համերաշխութիւն
մը ստեղծել մէկ կողմէ հայերու եւ միւս կողմէ
թուրքերու պարկեշտ ու քիչ շատ հայասեր մա-
սին մէջ. իր հեղինակաւոր թելադրութեամբը զօ-
րաւոր հակառակամարտ կուսակցութիւն մը կազ-
մակերպուեցաւ, որը լոյս ցերեկով յայտնի համար-
ձակ կը մարտէր երկիրը ազատելու այդ աւա-
զակային ընկերութեան կործանիչ ազդեցութիւնէն:
Թուրքեր եւ հայեր միասին եկեղեցիի
կամ մզկիթի մէջ ժողով կը գումարէին ու կը
խորհրդակցէին աւազակային ընկերութեան զէմ
ձեռք առնուելիք միջոցներուն վրայ: Եւսկային
մէջ յայտնի կերպով տեղական կառավարութեան
զեղծմանց զէմ բողոքի հանրապիրներ կը պտը-
ցնէին եւ ստորագրել կուտային թուրքերու եւ
հայերու ժողովրդի անունով բողոքի հեռագիրներ
կը քաշուէին Պատրիարքարանին ու Դրան՝ հայ եւ
թուրք ընտրեալ «ժողովրդի ներկայացուցիչնե-
րու ստորագրութեամբը: Առաջնորդարանի եւ միւ-
թեան բաղնիքին միջև յարաբերութիւնները դադարած
էին: Հայերու, երբեմն թուրքերու ալ, զատերը
Հայոց Առաջնորդարանին մէջ կը տեսնուէին:

Այս լարակ վիճակը ամիսներով շարունակեց:
Օր մ'ալ տեղական կառավարութիւնը փոր-
ձեց ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչները ձեռ-
բակալելու:

Թուրքերէն սկսաւ. Բէրիմ պէյը, Բօթանէնց
Ճագօն եւ ուրիշ թուրք երեւելի մը ձեռքակալ-
ուեցան:

Կիրակի օր մ'էր (1886ի աշնան սկիզբները).
այս անգամ Մշեցիները առաջուանները չէին. ժա-
մանակի եւ անխոնջ մշակներու թափած ջանքե-
րուն շնորհիւ գիտակցութիւններն զարգացած էր,
տառապանքը զիրենք խելքի բերած էր, կամ ի-
րենց բառովը՝ դանակը ուկորին էր հասած: Զեր-
բակալութիւններու լուրը լսուելուն պէս՝ ամբողջ
քաղաքը ոտքի ելաւ եւ հեռագրատուն դիմելով
ուղղակի Մեծ Եպարքոսին բողոքեցին կատար-

ուած կամայական ձեռքակալութեանց զէմ: Պա-
տասխան չեկաւ. գոհացում չգտան. թէեւ նորեր
չձեռքակալուեցան, երեք ձեռքակալուածները մը-
նացին բանտը: Ասոր վրայ հայերը ինք օր իրենց
խանութիւնը փակեցին, ու հակառակ ամէն ճըն-
շու մի, ամէն սպանալիքի, ու անգին նի թական
վնասներ կրելով հանգրձ՝ խանութիւնը չբացին:
Մշոյ բոլոր առեւտուրը հայերու ձեռքն ըլլալով՝
խանութիւններուն փակումովը ինք օր մնակութիւն
եւ գերեզմանական լուրթիւն մը պատեց ամբողջ
շուկան: Ինչերորդ օրը կառավարութիւնը տեղի
տուաւ. բարձրագոյն հրամանաւ բանտարկեալնե-
րը ազատ արձակուեցան, ու նոյն այդ օր մ'առաջ
բանտարկուածներուն եւ իրենց հայ պաշտօնա-
կիցներուն — «ժողովրդի ներկայացուցիչներուն» —
ուղղակի Դոնէն հեռագիր եկաւ իմացնող թէ Պօլ-
սէն յատուկ քննիչներ պիտի գան եւ քննութեան
պիտի առնեն իրենց եւ տեղական կառավարու-
թեան բարձրատիման պաշտօնատարներուն միջև:
Գոյութիւն ունեցող գառը ժողովուրդը այսպէ-
սով հանգարտեցաւ, ու կ'սպասեր քննիչներուն
գալուն:

Բայց միեւնոյն ժամանակ կառավարութիւնը
աշխատեցաւ Ալէաթճեան Սրբազանը Մոջն հա-
նելու: Նախ Մշոյ միւթէսարիքը իրեն հաղորդեց
կառավարութեան որոշումը. Ալէաթճեան տեղէն
չչարժեցաւ. «կայսերական իրատէսով եկած եմ ու
կայսերական իրատէսով միայն կը հեռանամ» եղաւ
իր պատասխանը: Երկրորդ անգամ Բաղէշի կու-
սակալէն հրաման եկաւ որ միկին, Ալէաթճեան
նոյն պատասխանը տուաւ: Վերջապէս երրորդ ան-
գամին Յարութիւն Պատրիարքը թախանձագին
հեռագրով մը խնդրեց որ Վան երթալ իբր Պատ-
րիարքական փոխանորդ, միանգամայն յայտարա-
րելով որ հակառակ պարագային ինք պատասխա-
նատու պիտի ճանչցուի Մշոյ բոլոր անցքերուն:

Ասոր վրայ Ալէաթճեան Մոջն ելաւ, Վան
գնաց:

Իր Մոջն ելքը յարթական գնացք մը եղաւ.
հայ եւ տաճիկ անհամար բազմութիւն մէկ երկու
ժամու ճանապարհ իրեն ողջութիւն գացին. հայերէն
ն՛ւ տաճիկերէն ճառեր արտասանուեցան. ինքն ալ
իր փառաւոր հասակովը ձիու վրայ աշտանակած՝
պերճախօս ատենաբանութիւն մը ըրաւ, որով յոր-
գորեց ժողովուրդը հաստատ կենալ աւազակնե-
րու ընկերութեան զէմ իր գատին, որուն վերջ-
նական յաղթութեան հաւատացող մ'էր:

Եւ իրօք Ալէաթճեան նկալած չէր:
Մնացեալը յաջորդ բուով

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Կիրակի օրուան Եկեղեցւոյ բակին մէջ եւ
գրան առջեւ տեղի ունեցած միջազգայնուան առ-
թիւ միզ դրկուած նամակէ մը կը քաղենք հե-
տեւեալը:

«Կիրակի առաւօտ Պատարագի արա-
րողութեան ատեն, յիշատակութեան միջո-
ցին մէկ երկու երիտասարդ «չպիտի յիշ-
ուի»ի աղաղակ բարձրացուցին հակառակ
փբուն սպառնալիքներով խմբազրուած մի
պաշտօնական յայտարարութեան, որ Առաջ-
նորդարանի կնքով Եկեղեցւոյ բակը կախուած
էր: Պատարագի արարողութեան աւարտու-
մէն յետոյ, ժողովուրդը իր պարտականու-
թեանց առաջինը նկատեց տաճարին դրա-
նը կից կախուած, այդ ձեզա Գանուկանաւե-
սիի!! հատուածը պարունակող չըջանալի
կտորներու վերածել, իր նողկալի ե գըր-
գառիչ պարունակութեան համար:

Քանի որ, կ'ըսէ նամակագիրը, սոյն
միջադէպը առիթ կուտայ մեկ ինչպիսի ա-
ւելի մանրամասնութեանց մէջ խորատու-
վելու, հետեւաբար կ'աւրժէ որ լուրջ կեր-
պով մատնանիչ ըլլան ազգային իշխանու-
թեան մէջ սպրդած հոգեւոր եւ աշխարհա-
կան պառակտիչ ոգիները:

Առաջ. փոխ-տեղապահ Տէր Մամբրէ քահանայ կ'ուզէ որ ցաւալի թուական մը բանայ Գահիրէի հայութեան համար, հակառակ իր քահանայական նուիրական ուխտին:

Օրմանեանէն դեռ նոր ստացած ծաղկեայ փիլոսոփան(ը) փութութեամբ, անխիղճ ու ապիկար իշխանութեան մը հետ, ի հարկին հայ ժողովրդի միահամուռ ձեռքակալումը խնդրող պաշտօնական թուղթերը փութկոտութեամբ մը ստորագրելէ յետոյ հեջիպէ կ'ընէ այս ինչ կամ այն ինչ պաշտօնատան և արտասովոր խանդավառութենէ մը բռնկած խնդրոյն ստիպողականութիւն տալով ոստիկանութեան նախարարութենէն գաղտնի յրահանքեր կը խնդրէ որ առաջ:

Իրենց սիրան ու միտքը ջերմեանդօրէն առ Աստուած բարձրացնելու համար Եկեղեցին հաւաքուած հաւատացեալ ժողովուրդը, գայթակղելով լրտեսներու ներկայութենէն և մանաւանդ անոնց գայթակղեցուցիչ ձեւերէն իրենց կրօնական զգացումը վիրաւորուած մեկնեցան, ոմանք ալ դուրսը բանկալին առջև օրուան անցած զարձածին վրայ կը վիճէին:

Այդ միջոցին ծպտուն ոստիկանութիւնը միջամտել կ'ուզէ երկու վիճաբանոցներու և առկէ կը ծագի պզտիկ խառնաշփոթութիւն մը: Կանխաւ եղած կարգադրութեան մը համաձայն լրտեսապետը կը հրամայէ դուրսէն զօրքեր բերել տալ, այդ պահուն քանի մը հոգիներ խոհեմութիւն համարելով եկեղեցւոյ տաճարին դռները կը փակեն, որով չեն կրնար թէ զօրքերը և թէ հոն հաւաքուած բազմութիւնը ներս խուժել, հակառակ փոխ-տեղապահին ամենարուստ բաղձանաց:

Այդ պահուն է որ բանկալի կէսիկլի հաճի աղան «հայ ազգը գեանին սակը անցնի», բացազանչութիւններով, առաջնորդարանի սանդուխներէն վար կ'իջնէ և կ'աներեւութանայ . . .

Տաճարին դուռը փակուելով ամենաժանր խռովութեան մը առաջը կ'առնուի, որ ինչպէս յայտնի է, աղետալի հետեւանքներու պիտի յանգէր, երբ զօրքերը ներս խուժել կարենային:

Փոխ-տեղապահ քահանային սուած կրկնակի երգումներուն վրայ, թէ ձեռքակալում. տեղի չ'պիտի ունենար դուռները բացուեցան և ներսը փակուած կրկնաթուղթերէն մեծագոյն մասը և անոնց մէջ խառնուած ծպտուն լրտեսները մեկնեցան եկեղեցիէն:

Քանի մը հոգիներ Առաջնորդարան ելլելով իրաց այս անխորտակացութեան վրայ բացատրութիւններ պահանջեցին և բողոքեցին ձեռք առնուած այդ միջոցներուն գէմ, գիտել տալով թէ Ս. տաճարի մէջ խմբուած երկու սեռէ բարեպաշտ ժողովրդեան մը մէջ, օտարազգի լրտեսներու ներկայութիւնը և եկեղեցական կարգ ու սարքերուն հակառակող անոնց ունեցած

(*) Կամակապիւրը փիլոսոփ և լանչախաչի ինչ միջոցներով ստացուած ըլլալուն լաւ ծանօթ և զած ըլլալու չէ, յարմար առթիւ մը մենք կը խոստանանք բացատրել:

ձեւերը անտեղի և վիրաւորիչ է եւն: Մինչև հոս գործերը այս վիճակը կ'ունենան. սակայն չ'գիտցուիր թէ ինչ նոր հրամանէ միտելով, գիշերուան ժամը Յին Պէնի-Սուրէնի մէջ գտնուած բոլոր Հայոց բաց խանութները և սրճարանները կը պաշարուին զօրքերէ և ձեռքակալութիւններ կը կատարուին:

Քառասունէ աւելի հայեր, ոճրագործներու նման ձեռնակալներով (քէլէպօն) բանա կը սարուին: Ձեռքակալութիւններու մէջ կային ընտանեաց տէր և զաւակներու հայրեր, որոնցմէ շատերը խնդրէն բնաւ տեղեկութիւն չունէին:

Գիշերուան այդ պահուն կատարուած յանկարծական ձեռքակալութիւնները մեծ յուզում և իրարանցում առաջ բերին:

Կէս գիշերին քանի մը հոգիներ միացած Առաջնորդարան կը դիմեն բացատրութիւն առնելու փոխ-տեղապահին, որն առջի բերան կ'ուրանայ ամեն ինչ, ըսելով թէ բանէ մը տեղեկութիւն չունի, սակայն եղած հարցապնդումներէն նեղը մնալով, առաւօտեան իր կարգին վրայ երգում ընող Տէր պապան կը խոստովանի թէ ինքը ժողովին որոշումները յարգելու պարտաւոր է:

Ահա այսպէս կիրառործուէին բաղձանքը քանի մը աղաներու և Տէր պապան, որք քանիցս սպառնացած էին թէ «ամեն ալ շղթայակալ կ'աքսորենք»:

Արդար զայրոյթով լեցուած ներկաները կ'ստիպեն զինքը, որ իրենց հետ ընկերանայ մինչև ոստիկանատուն և բանտարկեալները ազատելով իրենց ընտանեաց քով վերադարձունէ: Աւելորդ է ըսել թէ ոստիկանութեան վերին պաշտօնեայն, ամենքն ալ ձեռնունայն հո կը ճամբէ, անշուշտ զարմանալով Փոխ-Տեղապահին երկրորդ ընթացքին, որով քանի մը ժամ առաջ դրաւոր կերպով ձեռքակալումը խնդրած անձերուն արձակուելը կ'ուզէր:

Հետեւալ օրը երկուշաբթի կէս օրին ամենքն ալ կ'արձակուին առանց հարցաքննութեան:

Նամակի այս կարեւոր մասերը քաղելով ընթերցողաց ներկայացնել յետոյ, մեր կողմանէ բառ մը անգամ ըսել աւելորդ կը համարինք, որովհետեւ ինչպէս կը տեսնուի, Ազգ. Առաջնորդարանը իր ընթացքով հեռազնտէ իր գործերը աւելի կ'ընձուռան իր ջանայ, ո'վ գիտէ ինչ նպատակաւ կամ ինչ խորհրդատուներու սխալանաց հետեւելով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օրը օրին հասած հեռագիրներէն կը տեղեկանանք թէ Թրանսպալ կը պնդէ թէ Մեծն Բրիտանիա գերիշխանութեան ո' և է իրաւունք չունի Թրանսպալի վրայ:

Թէև նախագահ Քրիւկէր կը խոստանայ 1884ի դաշնագիրը կէտ առ կէտ գործադրել և մի և նոյն ատեն անգղիացի գաղթականներուն եօթը տարուան ընակութենէ յետոյ քաղաքացիական ամէն ազատութիւն շնորհել կը խոստանայ, սակայն խնդրին հայտարար լուծման յոյսը գրէթէ կորսուած

կ'երի, ինչպէս որ հեռագիրները գուշակել կուտան: Արդարեւ այդ յոյսը շատոնց գոյութիւն ունենալէ գաղթած է: Վասն զի Անգղիա այս կամ այն պատճառով տակ Թրանսպալի գէմ պատերազմ բանալ կ'ուզէ ձէյմընի ծանօթ արշաւանքը ի դերեւ ելնելէն ի վեր:

Կրնայ ըսուիլ թէ այս պատերազմը Պ. Չէմպըրլէյնի գործն է:

Այս առթիւ շահեկանութենէ զուրկ չէ, կարծենք, հոս մէջ բերել ճառին այն հատուածը, զոր նայն ինքն Պ. Չէմպըրլէյն արտասանած է 1896ին անգղ. խորհրդարանին մէջ:

Կորովի կայսերականը այն ատեն սապէս կ'ըսէր.

«Հարաւային Աֆրիկէի մէջ պատերազմ մը ամենէն ծանրակշիռը պիտի լինի զօր կարելի չէ երբեք երեւակայել:

Ատիկայ երկար, ստիկայ պատերազմ մը պիտի ըլլայ որ շատ սուղի պիտի նստի: Ինչպէս որ արդէն դիտել տուի, կարծեմ թէ ապագայ սերունդներ անոր յիշատակը գոռարաւ պիտի մոռնան:

Նախագահ Քրիւկէրի գէմ պատերազմ մըն՝ որպէս զի իր երկրին ներքին գործերուն վարչութեան մէջ բարենորոգումներ ընելու հարկադրուի. ստիկայ անտեղի ու անիրաւ գործ մը պիտի ըլլար: Քանի որ յիշեալ կառավարութեան մէջ արժանաւոր և կարող պաշտօնեաներ արտաքին ամէն միջամտութեան իրաւունք ի բաց կը մերժեն»:

ՀԵՌԱԳԻՐ

ՀԱՎԱՍՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

Փարիզ, 19 Սեպտ.

Տրէյֆուսի պատժին ներուժ եղած է:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ե Ն Ե Ր

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Ամենահիւս դրամահանում. — Յայտնի է թէ ներկայ դարուս վերաբերեալ ամեն բանի մէկ վաղեմի օրինակը կը գտնուի Չինաստանի, ծառանի կամ Հնդկաստանի մէջ: Ահաասիկ այժմ դրամատանց կողմանէ շրջաբերութեան հանուած գրամատոմներու ամենահինը տեսնուած է որ Քրիստոսէ 2697 տարի առաջ շրջաբերութեան հաներ է Չինաց կառավարութիւնն: Այդ դրամատոմին վրայ Չինաց պաշտօնէից ամանց ստորագրութիւնք, տմաթիւ, թղթահամար եւ ուրիշ ինչ որ պէտք է՝ գտնուելէ զատ, սա փիլիսոփայական ազգն եւս կայ. — «Շահելու համար ամեն ջանք ու ճիգ թափեցէք», սակայն ծախք ընելու համար

(*) Միշտ նկատի ունենալով սակայն, որ շահելու միջոցները պատուաւոր ըլլան. որովհետեւ շատեր կան, որ դրամ շահելու համար ամեն բան կը գոհն հիմակ. պատիւ, վարկ, եւ այլն: Այսպիսիներ շատ կը տեսնուին հրապարակին վրայ եւ մենք պէտք կ'ունենանք յորդորելու զերենք, որ ես կենան այդ ստորին միջոցներէն ի.

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՑՆԵՐՈՒ Գ. Է. ՄԷԼՎԱՃԵԱՆ

Գ Ա Ն Ի Ր Է
Յ Ո . Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

Գ Ա Ն Ի Ր Է
Ս Ո Ւ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

խնայողութեամբ վարուեցէ. — Արդէն Բե-
դերսոյութի թանգարանին մէջ կը գտնուի
Քրիստոսէ 1399 տարի յառաջ շրջաբերու-
թեան հանուած գրամատուն մը, ամենա-
կարծր ծառի մը կեղեւին վրայ շինուած :

Նամակատան պաշտօնեայ մը ի Կեր-
մանիա, հնգամեայ բանտարկութեան դա-
գապարտուեր է մանկամարդ տիկնանց և
օրիորդաց ուղղուած նամակները բանալ
կարգադու մուրթիներ դատաստանաւ հաս-
տատուելով: Այս մարդը բանտարկուելուն
վրայ չէ ցուեր, այլ այդ հաճոյքէն զըր-
կուիլը ծանր եկեր է իրեն: Ի՞նչ խարուսիկ
հաճոյք, կարենալ վայելելու համար մարդ
պէտք է:

Ոմանք ուրիշները հպարտ կ'անուանեն,
մինչդեռ իրենք նյայտակարար խոնարհներ
են:

Շատեր սրատես են սե ու սպիտակ
գոյները որոշելու տակն: Իսկ հոգին արա-
տաւորայ գոյները որոշելու ատեն կոյր են:

Յիշողի ընտրութեամբ ստացուած սի-
բոյ երջանկութիւնը, քիչ ատենէն ատելու-
թեան ու թշուառութեան կը դառնայ:
Ս. Գ.

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՆԻՐԷ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԾՆՈՒԹԱՅ ՍԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԱՆՑ ԵՒ ՍԱՆԿԱՊԱՐՏԻՉԻ

Մանչերու գպրոցը կը գտնուի Անդղիացւոց
վարժարանի շէնքին մէջ ի Պապէ-Յի-Սալը:
Աղջկանց և Մանկապարտիկ համար զատ
տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-Էլ
-Շարգավի, Տալուսիցէ:
Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի ա-
ւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն և
Արաբերէն լեզուները:
Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի տրուի
Անգղիերէնի:
Մանկապարտիկի համար պատրաստ է մաս-
նազէտ և փորձառու վարժուի մը և մանկա-
պարտիկի վերջին մեթոտներով ու գրութեամբ
պիտի կրթէ մանուկները:
Վարժարաններու բացումը սեղի պիտի ու-
նենայ առաջիկայ Սեպտեմբեր 4ին
Մանրամասնութեանց համար դիմել, Տիար
Հաճի Փիլիպպոս Եագուպեանի ի Մէնչիլի:
9—15

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութեան և
բժշկական վարժարանէն
Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա
Ապու-Էլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին
գիմաց:
Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը և տեղական
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:
Իրեն գիմողները կատարելապէս գոհ պիտի
մնան:
2—24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒԻՇԵԱՆ

Վ.Ա.ԱՍՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱՅ

Գ.Ա.ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ.Ա.ՀԻՐԷ
Ս. Ե. Ս. Սեհնավի վանուասան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի և քօնսօլի ընտիր տե-
սակէ բանտիւներու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց և կա-
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ար-
ծար և ցիֆէ:

Ֆրանսական և ամերիկեան ապրանքաց ամե-
նաբնտիր քտակներէն զարդեղներ, շքաներ,
օղեր, մասանիներ և այլն:

Ս.Մէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ

15—50

ՏՕՐՓՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՄՈՅԺ
Քաջիմ, Շարե Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
տակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակուաներ:

Կը գաղբեցնէ վայրկեանապէս ակուայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ:
4—10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

Ա.ՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ Ա.ՊՏԻՆ

Տայիրէի Սանիթի Տիես դիմաց

Ամենաբնտիր ապրանքներէ կը պատրաստէ
խիտ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աման
Փորձ մը միայն կը բաւէ:
7—24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՅԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐՈՒՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերակներ, Մահագրեր, Հրատիրագրեր, Այցեխարտեր, Յանկեր,
Դիւիտեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց և
վաճառականներու սպագրական արձեւ պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները յարմարեցնել ի գոհացնել գործերու մաքրութեան,
ճշգրտագնութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրույտաւոր ո է և է բազաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

Տպագրւելու Ս. Ա. ԴԱՐՈՒՆԵԱՆ

Le Gérant Dr S. A. HAGOPIAN

ԳՐԻԳՈՐ ՊԷՏԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պազար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խնամքը
Շարա Միւղէյինէն փոխադրած է ի Պազար Մու-
րուր: Ֆրանսական նորածեղութեանց յար և նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբ մինչեւ ցարդ գոհ ըրած է իրեն դի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր դործածած ապրանքներու տոկունու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել
և կոշտերէ (նասոր) ազատ մնալ: 10—24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ ԿԷԼ-ԱՍԱՊԻ ԿԵՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ
(բաստըզ) սեւ, չազ անակագոյն և ոսկեգոյն:
Սեւ ներկ չիչով վայրկեանապէս սեւցնող:
Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը գաղբեցնէ և մա-
զերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տագ)
գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճա-
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիա-
նալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշ-
ույլ (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր չիչով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կուտայ առանց
զգայնելու: Եզրույտաւոր մէջ միակը:

Ակուայի փոշի և շուր. մին մաքուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու-
րոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ
տակաւ թափիլ և օր մը ճաղատ բլլալու
վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր ազգայ գործածած նամա-
կագրոյնները: 3—8